

## Մայիսի երրորդ կիրակին նշվում է իբրև ՁԻԱՅ-ից մահացած մարդկանց հիշատակի համաշխարհային օր

ՁԻԱՅ-ից մահացած մարդկանց հիշատակի համաշխարհային օրն առաջին անգամ նշվել է 1983թ.՝ Սան Ֆրանցիսկո քաղաքում: Միջոցառման կազմակերպիչներն այն մարդիկ էին, ում կյանք էր ներխուժել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ը: Այդ ժամանակից ի վեր՝ ողջ աշխարհում մայիսի երրորդ կիրակի օրը նշվում է որպես ՁԻԱՅ-ից մահացած մարդկանց հիշատակի համաշխարհային օր: Այդ օրը միլիոնավոր մարդիկ հիշում են ՁԻԱՅ-ից մահացած մարդկանց, նաև արտահայտում են իրենց համերաշխությունը ՄԻԱՎ-ով ապրողներին: ՁԻԱՅ-ից մահացած մարդկանց հիշատակի համաշխարհային օրվա շրջանակներում ողջ աշխարհում անցկացվում են միջոցառումներ, որոնք ուղղված են հասարակության, կառավարությունների ուշադրությունը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդիրների վրա սևեռելուն: Այդպիսի միջոցառումներից են մոմավառությունը և «Քվիլթը»:



ՁԻԱՅ-ի զոհերի հիշատակին մոմեր վառելու արարողությունը, որը Առողջապահության գլոբալ խորհրդի նախաձեռնած ակցիան է, ոգեշնչում է համայնքներին և անհատներին՝ ընդգրկվելու ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարում: Սա համաշխարհային իրադարձություն է:

ՁԻԱՅ-ի զոհերի հիշատակին մոմեր վառելու արարողությունն առաջին անգամ տեղի է ունեցել 1983թ.-ին, երբ գրանցված էր ՁԻԱՅ-ից մահվան ընդամենը մի քանի հազար դեպք: Արարողությունը կարևոր նշանակություն ունի ՁԻԱՅ-ից մահացածներին հիշատակելու, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցություն ցուցաբերելու,

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի մեջ համայնքներին ներգրավելու համար: Այն առաջացնում է համախմբվածության զգացում և գրավում համընդհանուր ուշադրություն:

Տարբեր համայնքներում այս արարողությունը յուրովի է ընթանում: Մեկ համայնքում այն կատարվում է ընդամենը մի քանի ընկերների միջավայրում, մեկ այլ տեղ՝ հազարավոր մարդիկ երթի են դուրս գալիս վառվող մոմեր բռնած և հիշատակի երգեր երգելով:

ՁԻԱՅ-ից մահացածների հիշատակի Քվիլթը ողջ աշխարհում իրականացվող ամենամեծ հասարակական ծրագիրն է՝ ուղղված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի կանխարգելմանն ու ՁԻԱՅ-ից մահացածների հիշատակին:

Քվիլթ՝ նշանակում է լաթերից կարված ծածկոց: Ըստ հնում ծագած ավանդույթի, ծածկոցը կարել են ի հիշատակ մահացածի՝ նրա ընտանիքի անդամները, հարևանները և ծանոթները: Այդ նպատակով օգտագործվել են բազմազույն լաթեր: ՄԻԱՎ վարակի համաճարակը նոր հնչեղություն հաղորդեց լաթերից կարվող ծածկոցի ավանդույթին: Առաջին անգամ, ի հիշատակ ՁԻԱՅ-ից մահացածների, 1987թ. հունիսին՝ Սան Ֆրանցիսկոյում Քվիլթը կարել է Ջոնս Քլիվը, ինչով նա արտահայտել է ՁԻԱՅ-ից մահացած իր ընկերոջ կորստի ցավը: Միջոցառման նպատակը ՁԻԱՅ-ից մահացածների հիշատակը հավերժացնելն ու համաճարակի կործանարար ազդեցությունը մարդկանց տեսանելի դարձնելն էր: Քվիլթի յուրաքանչյուր կտորը նվիրված է ՁԻԱՅ-ից մահացած մեկ մարդու հիշատակին: Քվիլթը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ՄԻԱՎ վարակի համաճարակի իրական մասշտաբների մասին, գրավում է բազմաթիվ մարդկանց ուշադրությունը, ովքեր երբևէ չեն էլ մտածել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին՝ կարծելով, թե այդ խնդիրն իրենց չի վերաբերում:

Քանի դեռ ՁԻԱՅ-ը շարունակում է ողջ աշխարհում կյանքեր խլել, Քվիլթը մեծանում է՝ իր մեջ ներառելով հիշողություն, հույս և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ հաղթանակի հավատ:

